

ՄԱՍԻՆ

Տարեկան գինը 10 ռուբլի է տարվա 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպեկով

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ

Մեր հասցեն. Тифлиς, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատերազմող կողմերի դիրքերը.—Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կառավարիչ սենատի որոշումը:
Մամուլ. Նամակ կարգից. Նամակ խմբագրու-
թեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լու-
րեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի
շուրջը. Նամակ Պարսկաստանից. Արտաքին
լուրեր.— Հեռագրութիւն.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.

ՊԱՏԵՐԱԶՄՈՂ ԿՈՂՄԵՐԻ ԳՐԻԳՐԵՐԸ

III

Առաջ ենք բերում մի քանի խորհր-
դածութիւններ պատերազմական բեմի
մասին, օգտակար այս անգամ «НОВОСТИ»
լրագրի ամփոփումներից:

Յորդ անձրեւների պատճառով ճանա-
պարհները այնքան քանդակեցին ու փշա-
ցան, որ դժուարանում է զօրքերի շար-
ժումը: Մանջուրիայում սկսում են ան-
ձրեւներ գալ ապրիլի վերջին և մայիսի
սկզբին, իսկ յետոյ մայիսի կեսից մինչև
յունիսի կեսը եղանակը պարզվում է:
Սնունդեան սկսվում է անձրեւային շրջան,
որ շարունակվում է մինչև օգոստոսի
սկիզբը: Ամենամեծ անձրեւները տեղում
են յուլիսի երկրորդ կեսին: Այդ ժամա-
նակ օդը այնքան խոնավ է դառնում, որ
սպիտակեղէնը և ուռնամանները մի գի-
շերվայ ընթացքում բորբոսանում են, սո-
սնձված իրերը միմեանցից բաժանվում
են, իսկ ճանապարհները բոլորովին ա-
նանցանքի են դառնում:

Անկարելի է եսպոնական զօրքի կանգ
առնելը և նոյն իսկ յետ նահանջը բա-
ցարել միայն անձրեւներով: Այդտեղ ան-
կասկած դիտաւորութիւններ կան: Մա-
յիսի 1-ից սկսած՝ եսպոնացիները նկա-
տելի կերպով աշխատում են իրանց զօր-
քերը կենտրոնացնել Ֆինլանդիայում:

Միևնոյն ժամանակ եսպոնացիները սը-
կան են Ֆինլանդիայի շրջակայքում կա-
ռուցանել ամրութիւններ, կարծես նպա-
տակ ունենալով միայն մի որոշ ժամանակ
այդ տեղերում: Ֆինլանդիայի իր դիր-
քով չափազանց կարեւոր է, իբրև մի
կես, որ գտնվում է զանազան ճանա-
պարհների հանգույցում, այն է Նալոկի,
Դաուսլանդիայի, Դաուսլանդիայի, Լաօնիայի
և Սայկիայի եկող ուղիների կցուածքում:
Պահելով իրանց ձեռքին Ֆինլանդիայի
եսպոնացիները պաշտպանում են իրանց
յենակէտը և կարող են արշաւել դէպի
հակառակորդի բռնած ամեն մի կէտը:

Անգլիական աղբիւրներից՝ բոլորած մի
տեղեկութիւն բնորոշ է: Այն է, որ ես-
պոնացիները յայտնել են թաթարական
գեներալ Յենչիւնի թէ նրանք թողնում
են Նալոկը դարձեալ Չինաստանի կար-
գադրութեանը կառավարելու և խողով
կենցաղավարութիւն սկսելու: Ռազմագի-
տական տեսակէտով Եսպոնիայի այդ բու-
ղաբանութիւնը բացատրվում է նրա-
նով, որ եսպոնացիները գրանով ձգտում
են անտեսել իրանց վիճակը և ոյժերը
և միջոցները և չը զբաղեցնել զօրքը ուղիղ
պատերազմական գործողութիւններին չը
վերաբերեալ գործերով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՌԱՎԱՐԻՉ ՍԵՆԱՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Էջմիածնի հայ-լուսաւորչական սինդիկատ ամուս-
նական և ամուսնալուծական գործերը վարելու
կարգի մասին:

Նորին Կայսերական Մեծութեան հրամանով,
կառավարիչ սենատի որոշումը ընդհանուր
ժողովում լսեց. 1) արդարադատութեան մի-
նիստի օգնականի 1903 թ. յուլիսի 15-ից
գրված № 30843 առաջարկութիւնը՝ վճարել ի
գիտութիւն ընդհանրութեան յայտարարելու

կառավարիչ սենատի որոշումը, որ տեղի է
ունեցել 1902 թ. նոյեմբերի 15-ին երկրորդ
ընդհանուր ժողովում, որով անհետանք է
թողնված Բարձրագոյն Անուանով տրված ամե-
նայն հայոց պատրիարք-կաթողիկոս Մկրտիչի
ամենահպատակ բողոքը կառավարիչ սենատի
4-դ զեպարտամենտի Բ. որոշման դէմ—Էջմիած-
նի հայ-լուսաւորչական սինդիկատ ամուսնական
և ամուսնալուծական գործերը վարելու կարգի
մասին, և 2) ցուցում այն մասին, որ սենատի
երկրորդ ընդհանուր ժողովը, 1902 թ. նոյեմ-
բերի 15-ին ընկնելով Էջմիածնի պատրիարք-
կաթողիկոս Մկրտիչի ամենահպատակ բողոքը
կառավարիչ սենատի նախկին 4-դ զեպարտա-
մենտի 1899 թ. մարտ 14-ի վճարի դէմ, որով
4-դ զեպարտամենտն ընդունել էր, որ ամուս-
նական և ամուսնալուծական գործերը պէտք է
ընկնեն և վճարվեն Էջմիածնի սինդիկատ կողմի-
ցիալ ձևով, որի մէջ Էջմիածնի ծայրագոյն
պատրիարքը մասնակցում է իբրև նախագահ,
որի ձայնը գերակշռութիւն ունի միայն ձայ-
ններ հաւասար բաժանված ժամանակը,—կա-
յացից հետեւալ որոշումները. 1) Ներկայ բո-
ղոքը վերաբերվում է ամուսնական այն գոր-
ծերին, որոնք կատարվում են Էջմիածնի հայ-
լուսաւորչական սինդիկատ, օրէնագրերի XI հա-
տորի 1 մասը, օտար դաւանութիւնների կա-
ռուցողութեան 1142-դ յօդուածի հիման վրա,
և այն որոշման մէջ, որի դէմ բողոք է արը-
ված, կոչված են «ամուսնական և ամուսնա-
լուծական» գործեր: Այդ գործերը, ինչպէս
պարզել է այդ որոշումը, պէտք է ընկնեն և
վճարվեն Էջմիածնի սինդիկատ ձեռքով, համաձայն
նոյն կառուցողութեան 1146-դ յօդուածի կօ-
րէկիական իրաւունքներով. իսկ ինքրատու
պնդելով, որանք, իբրև զուտ կրօնական գոր-
ծեր, ենթարկվում են, նոյն յօդուածի հիման
վրա, պատրիարքի միահեծան իշխանութեանը,
որը, գործի մասին սինդիկատ արտաքին որոշու-
մը նայելից յետոյ, իրաւունք ունի, իր բա-
րեհայեցութեան համեմատ, հաստատել այն
կամ սինդիկատ առաջարկել ի գործադրութիւն
իր անձնական վճիռը: II. Այն հարցը պարզե-
լու համար, թէ արդեօք խնդրատուի մատ-
նացուց արած յիշեալ գործերի վճարման կար-
գը համապատասխանում է գործող օրէնքի
կանոններին, անհրաժեշտ է նախ տեսնել վի-
րոյիշեալ կանոնադրութեան մէջ այդ հարցի
վերաբերեալ վճիռները, ուր պարունակված են
նրա III գրքում «հայ-լուսաւորչական դաւա-
նութեան պատկանող բրիտանիաների հոգևոր
գործերը վարելու մասին»: 1142-դ յօդուա-
ծում մասնացուց են արված դատական մասի
գործերը, որոնք ենթարկվում են Էջմիածնի
հայ-լուսաւորչական սինդիկատ ընկնելու ու
վճարման, սինդիկատը որ բաղկացած է, ըստ 1139-դ
յօդուածի, 8 անդամից, Էջմիածնի ծայրագոյն
պատրիարք—կաթողիկոսի նախագահութեամբ,
որի տեղը, նրա բացակայութեան դէպքում,
ընտնում է, համաձայն 1148-դ յօդուածի, ներ-
կայ եղող արքեպիսկոպոսներից կամ եպիսկո-
պոսներից աւագագոյնը: Իսկ յիշեալ գործերի
թուում նշանակված են (§ 4) «ամուսնական»
գործեր, որոնք անցնում են սինդիկատի հայ-
լուսաւորչական իշխանական կօնսիստորիաների
բողոքների պատճառով: Հետեւալ 1143-րդ
յօդուածում (1 մաս) որոշված է. «Էջմիածնի
հայ-լուսաւորչական սինդիկատ, ինկնելով ծայրա-
գոյն պատրիարքի անմիջական հակադրութեան
տակ, վճարում է վերջնականապէս բոլոր հա-
ւատի դաւանանքներին, ծիսակատարութեան,
եկեղեցական կարգերի, պատկերների և հոգևորա-
կանների այն ոճիւրների գործերը, որոնք չեն
ենթարկվում աշխարհական դատարանների
ընկնելուն»: Յետոյ, 1146—1148-րդ յօ-
դուածներում որոշվում է սինդիկատ կառավարող
գործերի վճարման կարգը: Այդ յօդուածների
հիման վրա սինդիկատ ընդհանրապէս գոր-
ծում է կօրէկիական իրաւունքով, որի
ժամանակ՝ ձայները հաւասար եղած դէպ-
քում, գերակշռութիւն ունի պատրիարքը
ձայնը, իսկ նրա տկարութեան կամ Էջմիած-
նից բացակայ լինելու դէպքում—նրա տեղա-

կալի ձայնը (յօդ. 1148): Միայն այդ բաց են
առնվում միայն զուտ կրօնական գործերը,
որոնց մէջ պատրիարքին, օրէնքի խօսքի հա-
մաձայն, պատկանում է վճարման ձայնը (յօդ.
1146) և որոնք առանց նրան չեն կարող վճար-
վել (յօդ. 1148): Դրանց մասին խորհրդակ-
ցած ժամանակը պատրիարքը սինդիկատ ներ-
կայ չէ լինում: Բայց այդ վերջինի որոշում-
ները զննելուց յետոյ, որ գրվում են օրագ-
րութիւններում և ներկայացվում պատրիարք-
ին, նա տալիս է իր վերջնական եզրակացու-
թիւնները դրանց մասին:

(Կը շարունակվի)

Մ Ա Մ Ո Ւ Ն

Ելի մի գոհ... «Արեւմիտ» ամսագրի վերջին
համարը այս բացականչութիւնն է թիւս դրում:
Ինչ վերջին համար: Նա դուրս պիտի գար
դեռ անցեալ տարվայ դեկտեմբերին, այն ինչ
մեր սուսացա՞ր մայիսին: Պատճառը առանց
երկար գուշակութիւնների կարելի է իմանալ:
Դա մի և նոյնն է, որ գործում է մեր մամու-
լի պատմութեան առաջին օրերից: Եւ եթէ
կայ տարբերութիւն, դա այն է, որ այժմ
գոհ է կիւլ—խմբագիր է: Այն ինչ սրտառու
ձևով է խմբագրութիւնը պատմում իր ցարը:

Պարզութեամբ բնէք. Միջոցը մեզ կը պակ-
սէր, դրամը մեզ զրացնէր, ու, բնէք, մեր իրա-
ւունքը անհրաժեշտ բռնաբարելու ու կը
բռնաբարել մեր իրաւունքը բաժանողներու քարացած
ձեռքերուն մէջ:

Մեր ճակատը հպարտ է այսօր, մեր լեզուն կրնայ
իրաւունքով պոռչտալ մեր հարկաւոր անպարտա-
ճանաչ բաժանորդներու ճակատին. «անիդիքներ», «ա-
մենաւոր» ձգտումներու սպանիչներ:

Մեր անձնական հանդիսը ու անհատական աշ-
խատանքները արդիւնքն իսկ գոհաբերեցին մեր
սկսած ձեռնարկին ի նպատակ, յաճախակի զրկելով
մեր էութիւնը: Մեր հասարակութիւնը ինչ տակին
իրաւունք ունի պայտելու մեզմէ: Մեր ձեռնարկի
շարունակական ըլլալուն կապած կը մնա, չեղու
տարուան գոյութիւնն մը վերջ, որ, դարձեալ կրնայ
հարստութեամբ, միմիայն անձնական հերոսութեան
և սկսած զարգաբար զեպարտութեան վրա կը հիմնվի:
Մեր այս թիւով կը փակենք մեր երկրորդ տարին
սկսելու համար երրորդ տակին բուն, տակին հա-
տառուն, տակին գործնական ու անսպառ փարած
մեր գործին:

Սակայն անհրաժեշտ հարկ կը նկատենք փոքրիկ դա-
զար մտածելու, ոչ թէ մեր յոգնութիւնը կազդուրե-
լու մտքը, այլ մեր հիմքերը մեր իրաւունքներով ա-
ւելի զօրացնելու համար: Արտասահմանի, և ի մաս-
նաւորի Կովկասի մէջ մեր տակին քան 2000 ըրդիթի
(մօտ 5000 ֆր.) պահանջները առանց զարձուկելու
կը մնան ցայտօր:

Հայ կայսրը այնքան պիտակցութիւն չու-
նեն, որ գոհէ պահպանել իրանց դատին նը-
ւիրված օրգանը: 2000 ըրդիթի ապառիկ ունի
«Արեւմիտ» խմբագրութիւնը: Այդ գումարը
կատարելապէս մի թշուառ մեծութիւն կա-
րող է կազմել հայ կանանց բիւջէի մէջ. նոյն
իսկ եթէ կօնֆէանների ծախսը մի բիւջ պակա-
սեցնէին, դրա պէս մի բանի գումարների կը
տեսնուէին լրագրի, ամսագրի, թատրոնի,
բարեգործական ընկերութեան համար: Բայց
մեծ ենք ասում: Հայ կիւն էլ, ուրեմն, սի-
րում է ձրի թերթ կարդալ: Չարմառալ չենք
կարողանում. չէ՞ որ նա իր տղամարդի գու-
գակիցն է, նրա նման է մտածում, նրա պէս
է հասկանում...

«НОВОСТИ» լրագիրը հետեւեալ տողերն է
նուիրում հանդուգեալ կրգիչ Ն. Շահլամանին:
Մեռաւ արթնառ Շահլամանը: Հայ տարրական
գրագիտի խեղճ զիւղական ուսուցիչ, նա երաժշտու-
թիւն սիրողների ուղարկութիւնը գրաւեց իր ուժեղ,
գեղեցիկ ձայնով:

Նրան գուշակում էին փառք, նրան խնային հայրե-
նի գործից և ուղարկեցին մայրաքաղաք բազմ որո-
նելու: Այստեղ, Պետերբուրգի մէջ, սկզբում բազմ
ժպտաց Շահլամանին: Նրա ձայնը աղբիւրնում էր իր
ուժով և գեղեցիկութեամբ: Շահլամանին սկսեցին
սովորեցնել երգելու: Բայց այդ չէր աջակցում:
—Ես ուզում եմ երգել, երգել, ինչպէս այդ պա-
հանջում է իմ հոգին... բայց սովորել չեմ կարողա-
նում:

Օգիւրանքի սովորելու հանգուցեալին մեծ ջանքեր
էր պատճառում: Նա թողեց օպերան և սկսեց կօն-
ցիւրանքի տալ: Շահլամանի կօնցերանքը գրաւում
էին մեծ բանակութեամբ հասարակութիւն, իսկ այս

կօնցերանքից բացառած մուտքը նա յաճախ տալիս
էր ուսանող երիտասարդութեան:

Շահլամանը հիւանդացաւ և գնաց իր հայրենիքը:
Կովկասեան լիբանի մի ինչ-որ անկիւնում, մի աղ-
քատ զիւղի մէջ, իր վերջին օրերն էր անցկացնում
գեղեցիկ, ուժեղ ձայնի տէրը:

Ծանր տանջանքների մէջ նա երգում էր իր եր-
գերը և լաց էր լինում, հաւատացնելով շրջապատող
ներքին, որ նա ոչ միայն կօնցերանքային, այլ և օպե-
րային երգիչ է:

Երգչի կեանքը վերջանում էր աղբաւորութեան մէջ...
Նրան բերին Պետերբուրգ: Բայց արդէն ուշ էր:
Իր հայրենիքում, Կովկասի լիւններում, նա երգել էր
իր «կարապի երգը»...

Այս տաք, զգացված տողերի մէջ եթէ
կայ անճշդութիւն, դա այն է, որ Շահլամանի
հայրենիքը կովկասեան մի խեղճ զիւղ չէր
լիւնային լիբանի մէջ, այլ նահանգական
Գանձակ քաղաքը: Բայց տխուր իրողութիւնը
դրանից, ի հարկէ, չէ փոխվում:

Մենք ցոյց էինք տուել «Нов. Обзор»-ի
սխալները «Փորձի» վերաբերմամբ: Այժմ լրա-
գիրը պատասխանում է մեզ մի տեսակ նե-
ղացած, թէ և պէտք է շնորհակալ լինել մե-
զանից, որովհետեւ մեր դիտողութիւններից
յետոյ միայն, ինչպէս երևում է, նայել են
«Փորձին» և այս անգամ գոհ է մի բանի ձեռք
տեղեկութիւններ են տուել: Սակայն տեսէք,
թէ ինչ փաստաբանութիւնների է դիմում
ոռու լրագիրը իր սխալները ինչպէս էլ լինի՝
պաշտպանած լինելու համար: Մենք ասել
էինք, թէ «Փորձը» չէ կարելի հաստ ամա-
գիր անուանել և նմանեցնել «Вестник Ев-
ропы» և «Русская Мысль» ամսագրերի
հետ, որովհետեւ «Փորձը» տարին չէր անգամ
էր հրատարակվում: «Нов. Обзор» սրա դէմ
մեզ ասում է. «Կարծես թէ լրջ տեսնելու ժա-
մանակներից կարող է պակասել հաստութիւ-
նը»: Մենք այդպէս չենք ասել: Մէկը կարող
է տարին մի անգամ տալ մի գիրք, որ «Вест-
ник Европы» ամսագրից երկու անգամ մեծ
կը լինի, բայց դա չէ նշանակում, թէ այդ
գիրքը և «Вестник Европы»-ն ձեռք մի և
նոյն բաներն են իբրև հրատարակութիւն:

Դրանց համեմատել չէ կարելի, հաճախ էինք
ուզում ասել: Ռուս լրագիրը մեզ ուզում է
զարմացնել, ասելով որ «Փորձը», ամսագիր
դաճաւուց յետոյ, տալիս էր 200—250 երես:
Բայց դա մեր վէճին չէ վերաբերվում, այդ
թիւը «հաստ» ամսագիր չէ նշանակում և եթէ
մի անակնկալ գիւտ է, դա միայն «Новое
Обозрение»-ի համար: Պակաս հրատարակման
չէ և միւս փաստաբանութիւնը: Ռուս լրագի-
րը, պաշտպանվելով մեզ դէմ, ասում է, թէ
մենք ոչ չենք ասել, թէ յայտնի բեկորաբանու-
նեքը անպատճառ լիպակաւ գրուածքներ են
գիտեղել «Փորձի» մէջ. մենք միայն ասել ենք
թէ նրանք մասնակցել են «Փորձին»: Փաստա-
բանի պէս դատելով, դա գուցէ և ձեռք է:
Բայց գրականութեան մէջ երբ ասում են, թէ
այս ինչ բեկորաբանութեան մէջ երբ ասում են, թէ
ամսագրին կամ լրագրին, ամենքը հասկա-
նում են, որ ամենից առաջ այդ մասնակցու-
թիւնը պիտի արտայայտվի այն բանի մէջ,
ինչով յայտնի է այդ գրողը, այսինքն բեկո-
րաբանիկայով: Բայց ամենից զարմանալին
այն է, որ «Нов. Обзор» յանկարծ պաշտ-
պանվողից դաճում է յարձակվող: Ինչպէս, ա-
սում է, չէք յիշել այս բանը, ինչպէս մտացել
էր այն բանը: Ինչպէս գուցէ չէք յիշում, հարց-
նում ենք մենք: «Փորձը» խմբագրի մասին
գրողը դէպ էր եղել թէ մենք: Մենք միայն
մի բանի փաստերով ուղեցել ենք ձեր սխալ-
ները ցոյց տալ և երբեք մերը չենք ունեցել
«Փորձի» պատմութիւնը գրել: Իսկ պարտա-
ւոր էիք գրել: Ձեզ վրա էր վերցնում մի
խմբագրի գրական գործունէութեան գնահա-
տութիւնը և գտել էր թէ այդ խմբագիրը «հաստ»
ամսագիր է հրատարակել: Այդ գիւտն էլ
մերկայացրեք մենք: «Нов. Обзор»-ի վերջոյ
ուզում է ցոյց տաւած լինել, թէ մենք ենք,
որ հաստատ տեղեկութիւններ չունենք «Փոր-
ձի» մասին: Եթէ այդպիսի մի միջթարու-
թեան կարօտ է ոռու լրագրի յարգելի խմբա-
գրութիւնը, ինչպէս գրել նրան այդ միջթա-

Типографія «ГЕРМЕСЪ» С. Назарянца, Мих. пр. № 81